«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 1
02.09.2022թ.

1. Ուսումնական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման փորձի և դրանք բարելավելու կարիքների վերաբերյալ.

1.1. Ընդունել ի գիտություն:

1.2. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին սեղմ ժամկետում մշակել և ՀԱԱՀ Ռեկտորատի հաստատմանը ներկայացնել աշխատանքային պլան՝ համալսարանում հետաուդիտային մոնիթորինգի իրականացման, ստեղծված փաստաթղթերի վերլուծության, ռեգիստրար ծրագրի ներդրման, լաբորատորիաների էլեկտրոնային կառավարման հարթակի և վիրտուալ լաբորատորիաների ստեղծման, լրացված իրականության (AR) և վիրտուալ իրականության (VR) տեխնոլոգիաների ներդրման, տվյալների վերլուծության գործելակերպի զարգացման, Moodle հարթակի գործիքակազմի հնարավորությունների կիրառության ընդլայնման, ստարտափերի կողմից ներկայացվող նոր հարթակների ուսումնասիրման և ներդրման, գիտական հոդվածների ընդունման հարթակի ստեղծման վերաբերյալ:

2. ՀԱԱՀ 2022-2023 թթ. ուս. տարվա ընդունելության (բակալավրիատ, մագիստրատուրա և քոլեջ) արդյունքների և պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածության հարցի վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

3. Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կառուցվածքային փոփոխություններ կատարելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ գիտական խորհուրդը, բաց քվեարկությամբ որոշեց.

1. Լուծարել Հեռակա ուսուցման դեպարտամենտը և համապատասխան մասնագիտությունների ուսանողներին տեղափոխել համալսարանի առկա ուսուցման ֆակուլտետներ:

2. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի» և Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի» ամբիոնները միավորելով ձևավորել «Բարձրագույն մաթեմատիկայի, ֆիզիկայի և կիրառական մեխանիկայի» ամբիոն՝ Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի կազմում:

3. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Ընդհանուր քիմիայի» ամբիոնը միավորել Ագրոնոմիական ֆակուլտետի «Կենսաբանության և կենսատեխնոլոգիաների» ամբիոնի հետ, ձևավորել «Կենսագիտության և ընդհանուր քիմիայի» ամբիոն Ագրոնոմիական ֆակուլտետի կազմում:

4. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Հողաշինարարության և հողային կադաստրի» և «Ջրային ռեսուրսների կառավարման» ամբիոնները միավորելով ձևավորել «Ջրային և հողային ռեսուրսների կառավարման» ամբիոն:

5. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի «Մորֆոլոգիայի, ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի» և «Անասնաբուծության» ամբիոնները միավորելով ձևավորել «Մորֆոլոգիայի և կենդանագիտության» ամբիոն:

6. Դիմել ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդին՝ առաջարկելով հաստատել Գիտական խորհրդի ընդունած որոշումները:

4. Սոնա Լևոնի Խոջոյանին որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

4.1. Սոնա Լևոնի Խոջոյանին ձևակերպել որպես հայցորդ ՀԱԱՀ ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ագրարային էկոնոմիկայի ամբիոնիում:

4.2. Ս.Լ. Խոջոյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «Ազգային բրենդինգի զարգացման հիմնական ուղղությունները (ՀՀ գինեգործության ոլորտի օրինակով)»՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

4.3. Գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վարդան Սամվելի Ալեքսանյանին:

5. Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոնի տնօրեն, Անասնաբուծության ամբիոնի պրոֆեսոր Յուրի Գիգոլի Մարմարյանին և համալսարանի գիտական գրադարանի վարիչ Հասմիկ Անդրանիկի Ադամյանին ՀԱԱՀ 90-ամյակի «Ոսկե» հուշամեդալով պարգևատրելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

5.1. Համալսարանում երկարամյա աշխատանքի, ագրարային ոլորտում կադրերի պատրաստման, գիտության բնագավառում անձնական ներդրումների, ինչպես նաև հոբելյանական տարեդարձի կապակցությամբ Յուրի Գիգոլի Մարմարյանին պարգևատրել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 90 ամյա հոբելյանին նվիրված «Ոսկե» հուշամեդալով և խրախուսել շնորհակալագրով

5.2. Երկարամյա աշխատանքի, գրադարանային գործի բնագավառում ունեցած վաստակի, երիտասարդներին փորձի փոխանցման, ծննդյան հոբելյանի և աշխատանքային գործունեության ավարտի առիթով Հասմիկ Անդրանիկի Ադամյանին պարգևատրել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 90 ամյա հոբելյանին նվիրված «Ոսկե» հուշամեդալով և խրախուսել շնորհակալագրով:

6. 2022թ օգոստոսի 31-ին կայացած ՀԱԱՀ Էթիկային հանձնաժողովի նիստի որոշման վերաբերյալ.

ՀԱԱՀ գիտական խորհուրդը որոշեց.

6.1. Հաստատել ուսանողների դիպլոմային նախագծերի կատարման, դրանց ղեկավարման և գրախոսման ընթացքում բազմաթիվ խախտումների փաստը,

6.2. Աշխատանքային կարգապահության խախտման, այն է՝ աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, ներքոնշյալ աշխատակիցներին ենթարկել կարգապահական տույժի.

- ԳՄԱՏՇ ամբիոնի վարիչ Ա. Մարգարյանին՝ խիստ նկատողություն,
- դոցենտ, տ.գ.թ. Գ. Վարդանյանին՝ խիստ նկատողություն,
- դոցենտ, տ.գ.թ. Կ. Հակոբյանին՝ խիստ նկատողություն,
- դոցենտ Գ. Դանիելյանին՝ նկատողություն,
- դասախոս Ա. Բաղդագուլյանին՝ նկատողություն,

6.3. Հանձնարարել ՈԳԱ կենտրոնի տնօրեն Լ. Զաքարյանին, իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին՝ սեղմ ժամկետում լրամշակել ՀԱԱՀ ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարի քաղաքականության կանոնակարգը և ներկայացնել Գիտական խորհրդի հաստատմանը:

6.4. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ սեղմ ժամկետում մշակել և ներդնել գրագողության դեմ պայքարի ծրագրակազմեր:

6.5. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ իրականացնել ուսանողների ավարտական աշխատանքների կատարման ընթացքի կանոնավոր վերահսկողություն:

6.6. Հանձնարարել ՀԱԱՀ ուսանողական խորհրդին՝ ուսանողությանը տեղեկացնել արձանագրված փաստի, ՀԱԱՀ ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարի քաղաքականության կանոնակարգի դրույթների վերաբերյալ:

7. ՀԱԱՀ Մեթոդական խորհրդի կողմից ներկայացված դասագիրքը, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներն ու ուղեցույցը հրատարակման երաշխավորելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

7.1. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի կողմից ներկայացված «Ընտանի կենդանիների անատոմիա» ինտեգրող համակարգեր, մաս III, անվանումով դասագիրքը երաշխավորել հրատարակման (հեղինակներ՝ Ռ.Ս. Մխիթարյան, Ն.Խ. Գրիգորյան, Ս.Խ. Կոբելյան):

7.2. «Նյուքասլյան հիվանդության ախտորոշումը, կանխարգելումը և պայքարի միջոցառումները» ֆերմերների և անհատ թռչնաբույծների համար անվանումով ուղեցույցը երաշխավորել հրատարակման (հեղինակներ՝ Մ.Ա. Սարգսյան, Ա.Ռ. Մկրտչյան, Ա.Ռ. Հակոբյան, Հ.Ս. Բալասանյան, Գ.Ռ. Թովմասյան):

7.3. «Տնտեսաչափություն» առարկայից գործնական աշխատանքների կատարման համար ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակման (հեղինակներ՝ Գ.Վ. Վարդանյան, Գ.Հ. Քեշիշյան):

7.4. Գ.Ա. Թովմասյանի հեղինակությամբ հրատարակված «Արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկ»-ը, «Արոտավայրերի ու խոտհարքերի կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման ուղեցույց»-ը, «Դեգրադացված բնական կերային հանդակների (արոտավայրերի և խոտհարքերի) բարելավման ուղեցույց»-ը և «Կերարտադրության վարում՝ շրջակա միջավայրի պահպանության հիմունքներով» ձեռնարկը ճանաչել որպես ուսումնամեթոդական ձեռնարկներ:

8. ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի 1-ին կուրսերի ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ.

ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի 2022-2023 թթ. ուս. տարվա 1-ին կուրսերի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակ հիմք ընդունել ՀՀ ԿԳ նախարարի 03.05.2017թ.-ի թիվ 471-Ա/2 հրամանին համապատասխանեցված հանրակրթական առարկաների վերանայված տարբերակը:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ